ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ Քրիստինե Հարությունյանի՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն գործուղման արդյունքների մասին 2023թ. հոկտեմբերի 20-ից 22-ը

1. **Հրավիրող կողմ**

   Ասիական զարգազման բանկ

2. **Միջոցառման անվանում**

   Կանաչ և ցածր ածխածնային զարգացմանն ուղղված 2023 Ասիա-խաղաղօվկիանոսյան համաժողովը և Արևելյան Ասիայի համաժողովը

3. **Ի՞նչ հարցեր են քննարկվել**

   Համաժողովը բաղկացած էր 2 լիագումար նիստերից, որոնք նվիրված էին կայուն զարգացմանն ուղղված փոխակերպումներին և նորարարություններին: Ճանապարհ դեպի COP28. ինչպես է ընթանում կլիմայի փոփոխության դեմ պայքարը Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում և անցում դեպի Net-Zero (գրեթե զրոյին մոտ) Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան թեմաներին:

4. **Ի՞նչ ելույթներ են հնչել, ու՞մ կողմից**

   Նիստ 1. Կլիմայի փոփոխության քաղաքականություններ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում

   Նիստ 2. Ածխածնի գնագոյացում զարգացումներ և ՉԺՀ-ում կանաչ և ցածր ածխածնի զարգացում հեռանկարներ

   Նիստ 3. Նոր կլիմայի տեխնոլոգիաներ (մեղմացում). էներգիա պահեստավորում, ջրածին և այլ նորարարական տեխնոլոգիաներ

   Նիստ 4. Առևտուր, ներդրումներ և կլիմայի փոփոխություն Ասիայում և Խաղաղ օվկիանոսում

   Նիստ 5. Կլիմայի փոփոխությանը հարմարվողականություն և կայուն զարգացում

Նիստ 6. Հանրային-մասնավոր գործընկերություն և երկխոսություն հանուն կանաչ և ցածր ածխածնային զարգացման

Նիստ 7. Ֆինանսական նորարարություն կլիմայի և առևտրի համար

Համաժողովի ընթացքում հնարավորություն ստեղծվեց ծանոթանալ չինական փորձին, անդրադառնալու մարտահրավերներին և խնդիրներին: Տեղեկատվություն ներկայացրեցի Հայաստանի կանաչ էներգետիկայի զարգացումների վերաբերյալ:

Քրիստինե Հարությունյան
26 հոկտեբերի 2023թ.